ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը՝ Ռաֆիկ Մաշադյան, Ռուստամ Բադասյան, Միքայել Փաշայան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալներ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ քաղաք Մյունխեն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2018թ. սեպտեմբերի 23-27-ը:

4. Հրավիրող կողմը՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ գերմանական կողմ:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Գործուղման նպատակ է հանդիսացել ՀՀ հարկային վարչարարության համակարգի բարելավման նպատակով՝ իրականացնել ճանաչողական այց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բավարիայի տարածաշրջանի հարկային ծառայություն (այսուհետ՝ Գերմանիայի հարկային ծառայություն), հանդիպումներ ունենալ Գերմանիայի հարկային ծառայության հարկային վարչարարության համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների հետ, ուսումնասիրել վերջիններիս կողմից իրականացվող գործառույթները, այցելություններ կատարել առանձին ստորաբաժանումներ, գործուղման արդյունքում ստացված փորձառությունը օգտագործել նաև ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության մշակման աշխատանքների շրջանակներում:

6. Քննարկված թեմաները՝ Հանդիպումների ընթացքում Գերմանիայի հարկային ծառայության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ներկայացվել է ծառայության կառուցվածքը, գործառույթները և քննարկվել են վերջին ժամանակաշրջանում իրականացված հիմնական հարկային բարեփոխումները, ներկայացվել են նաև հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների տեսակները, տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հարկային վարչարարություն իրականացման շրջանակներում, հարկային հսկողության մեխանիզմները, գործիքակազմը, իրավական և վարչական ընթացակարգերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Հանդիպումներ են տեղի ունեցել Գերմանիայի հարկային ծառայության ղեկավար անձնակազմի, հարկային աուդիտի, վերլուծության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ: Վերջիններիս կողմից ներկայացվել են այդ ստորաբաժանումների գործառույթները և դրանց կիրառման ընթացակարգերը, քննարկումների ընթացքում համեմատականներ են անցկացվել նաև ՀՀ հարկային մարմնի գործառույթների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպումները ունեցել են ճանաչողական բնույթ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել Գերմանիայի Դաշնային Հանրապետության հարկային վարչարարության արդյունավետ փորձը և հետևաբար

փաստաթղթեր չեն ստորագրվել: Միաժամանակ գերմանական կողմը հայտնել է իր պատրաստակամությունը անհրաժեշտության դեպքում օժանդակելու ՀՀ հարկային մարմնին՝ հարկային վարչարարության գծով գերմանական արդյունավետ փորձը կիրառելու ուղղությամբ:

Բացի այդ, Գերմանիայի հարկային ծառայության հետ հանդիպման ընթացքում բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային կապուղիների միջոցով առավել մանրամասն քննարկելու մեծ ծավալի (Big Data) տեղեկությունների վերլուծության գերմանական փորձը (հաշվի առնելով այն, որ ներկայումս ՀՀ հարկային մարմնում իրականացվում են աշխատանքներ մեծ ծավալի տեղեկատվության վերլուծության մասով):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով այն, որ ներկայումս ՀՀ հարկային մարմնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ մշակվում է հարկային վարչարարության ռազմավարությունը, ուստի ճանաչողական այցի շրջանակներում ՀՀ-ում կիրառելի առանձին գործընթացներ կօգտագործվեն ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության նախագծի շրջանակներում, որի վերջնական մշակումից և քննարկումից հետո կսահմանվեն գործողությունների կատարման ժամկետները, պատասխանատուները և դրանցից ակնկալվող արդյունքները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 01.10.2018թ.